

eration of the state and the market which will promote the solution of questions of economy. After the 30th years of the twentieth century gradual development of the production, economic relations, changes of public distribution of work and the commodity-money relations, created serious preconditions for formation and development of financial and social functions of the state. In the first half of the XX century those theoretical theses were scientifically proved that the modern market economy can't normally develop without the state help without which society can feel on itself such negative phenomena which can lead to inefficient use of resources. Depending on requirements of prevention and overcoming of such phenomena responsibility bear not only subjects who carry out economic process, but also the state in the person of the government. Finally the state is responsible for regulation of a social and economic situation in the country. Shortcomings of the market create obstacles for the market and economy and consequently the solution of these problems created new tasks for thinkers, and state regulation of economy became objective need.

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՀՀ-ՈՒՄ

Ս. Ա. ԹԱԴԵՎՈՅԱՆ

*Տնտեսագիտության թեկնածու,
ԳՊՀ դասախոս*

Միջազգային մասնագիտացման շնորհիվ տնտեսական աճի ապահովումը հանդիսանում է տնտեսագիտության թերևս ամենահիմնավորված պնդումներից մեկը: Այս պնդման տեսական հիմնավորումը մշակվել է միջազգային առևտրի բազմաթիվ տեսություններում՝ սկսած Ադամ Սմիթից: Իսկ 20-րդ դարի երկրորդ կեսից համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական գործոններից մեկը համարվում է միջազգային մասնագիտացման շնորհիվ համաշխարհային առևտրաշրջանառության ծավալների աճը:¹

Այլ երկրների համեմատ՝ ՀՀ-ում միջազգային մասնագիտացման մակարդակը զգալի ցածր է, և արտահանումը զգալի փոքր դեր ունի համախառն եկամուտների ձևավորման գործում: Մասնավորապես՝ արտահանում/ՀՆԱ ցուցանիշով ՀՀ-ն (2010թ.-ին 20.7%) զիջում է ինչպես ԱՊՀ, այնպես էլ զարգացող շատ երկրների, այն զգալի ցածր է Համաշխարհային բանկի կողմից երկրների, ըստ եկամուտների մակարդակի դասակարգման, բոլոր խմբերի միջինից: Միջին ցածր եկամուտ ունեցող երկրների խմբում, որտեղ ընդգրկված է նաև ՀՀ-ն, այս ցուցանիշի ավելի ցածր մակարդակ ունեն միայն այնպիսի երկրներ (Պակիստան, Ռուանդա, Սուդան), որոնց մեկ շնչին ընկնող գնողունակության պարիտետով հաշվարկված ՀՆԱ-ն ավելի քան 2.5 անգամ ցածր է ՀՀ նույն ցուցանիշից:² Սյուս

¹ Joans, Ronald at al.: "The positive theory of international trade" in Joans, Ronald at al.: "Handbook of international economics," Volume I, 1984, First Edition, Elsevier Science Publishers, North-Holland, էջեր՝ 2-65.

² Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով World Bank: "World Development Indicators" տվյալների բազայից, էլ. հասցե՝ <http://data.worldbank.org/data-catalog/world-development-indicators>:

կողմից՝ ՀՀ վերջնական սպառման և համախառն ներդրումների համար կատարվող ծախսերի ավելի քան 1/3-ն ուղղվում է ապրանքների և ծառայությունների ներմուծման ֆինանսավորմանը, ինչի արդյունքում՝ ՀՀ առևտրային հաշվեկշիռը բնութագրվում է աճող պակասուրդով:³

Բերված համեմատությունները վկայում են, որ միջազգային մասնագիտացման ցածր մակարդակը և առևտրային հաշվեկշիռի աճող պակասուրդը հանդիսանում են ՀՀ տնտեսության հիմնական խնդիրներից, որոնք հաղթահարելու համար 2012թ.-ից իրականացվում է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն:

Սակայն, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, արտահանման ծավալների աճը, որը չի զուգորդվում արտահանման դիվերսիֆիկացիայով, կարող է ունենալ կարճաժամկետ բնույթ: Վերջին տասնամյակի ընթացքում միջազգային տնտեսագիտության և զարգացման տնտեսագիտության ոլորտներում առաջ են քաշվել համեմատաբար նոր տեսություններ, որոնք քննարկում են նաև արտահանման դիվերսիֆիկացիայի դերը արտահանման ծավալների և տնտեսական աճի ապահովման գործում: 2000-ական թվականներին այս ուղղությամբ իրականացվել են բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններ, որոնք հիմնականում հաստատում են դիվերսիֆիկացիայի շնորհիվ արտահանման ծավալների երկարաժամկետ աճի ապահովման հնարավորությունը:⁴

Հոդվածում քննարկվում են ապրանքների արտահանման կառուցվածքային խնդիրները ՀՀ-ում: Մասնավորապես՝ գնահատվում է ուղղահայաց և հորիզոնական դիվերսիֆիկացիայի ազդեցությունը 2001-2010թթ.-ին ՀՀ ապրանքների արտահանման ծավալների աճի վրա:

Գրականության մեջ կարելի է հանդիպել արտահանման դիվերսիֆիկացիայի երկու ձև՝ ուղղահայաց և հորիզոնական: Ուղղահայաց դիվերսիֆիկացիա տեղի ունի, երբ արտահանման մեջ «ավանդական» ապրանքախմբերի մասնաբաժինը կրճատվում է նոր ապրանքների արտահանման շնորհիվ, իսկ հորիզոնական դիվերսիֆիկացիան «ավանդական» ապրանքախմբերի մասնաբաժինների միջև տարբերությունների կրճատումն է:⁵

Դիվերսիֆիկացիայի տեսանկյունից՝ արտահանման կառուցվածքային տեղաշարժերը վերլուծելու հնարավորություն ընձեռում է արտահանման կուտակային փորձի ֆունկցիան, որը կառուցվում է վիճակագրության մեջ կիրառվող կուտակային բաշխման ֆունկցիայի սկզբունքով և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$C_{it} = (\sum_{i=t0}^i EXP_{it}) / (\sum_{i=t0}^T EXP_{it})$$

C_{it} -ն արտահանման կուտակային փորձի ֆունկցիայի արժեքն է i -րդ ապրանքախմբի համար ժամանակի t -րդ պահին, $t0$ -ն ժամանակահատվածի սկիզբն է,

³ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության “Վճարային հաշվեկշիռի տվյալների բազա”, էլ. հասցե: <http://www.armstat.am/am/?nid=246>; տվյալների բազայից:

⁴ *Mejia, J.*: “Export Diversification and Economic Growth”, 2011, Springer Verlag, Heidelberg, էջեր՝ 31-46:


⁵ Նույն տեղում, էջեր՝ 49-51:

T-ն՝ ավարտը, իսկ EXP_{it} -ն i-րդ ապրանքախմբի արտահանման ծավալն է ժամանակի t-րդ պահին: C_{it} ֆունկցիայի ընդունած արժեքները նորմավորված են $[0,1]$ միջակայքում: Այն դիտարկվող ժամանակահատվածում քանակապես մեկ գործակցով գնահատելու համար կիրառվում է տրադիցոնալության ինդեքսը, որը հաշվարկվում է որպես C_{it} ֆունկցիայի $[t_0, T]$ ժամանակահատվածում ընդունած արժեքների թվաքանական միջին:

$$T_i = (\sum_{i=t_0}^T C_{it}) / (T - t_0 + 1)$$

Դիտարկվող ժամանակահատվածի ավելի վաղ շրջանում արտահանման փորձ կուտակած՝ «ավանդական» ապրանքախմբերը ունեն T_i -ի համեմատաբար ավելի բարձր արժեքներ, իսկ «ոչ ավանդական» ապրանքախմբերը՝ համեմատաբար փոքր: C_{it} ֆունկցիայի կայունությունը գնահատելու համար օգտագործվում է վարիացիայի գործակիցը՝ V_i -ն:⁶


Գծապատկեր 1. «Ոչ ավանդական» ապրանքների արտահանման C_{it} ֆունկցիայի շարժը 2001-2010⁷



⁶ Նույն տեղում, էջեր՝ 66-68

⁷ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով United Nations: "COMTRADE Database", էլ. հասցե: <http://www.intracen.org/country/armenia/>:

**Գծապատկեր 2. «Ավանդական» ապրանքների արտահանման
C_{it} ֆունկցիայի շարժը 33-ում⁸**



Գծապատկեր 1-ում և 2-ում ներկայացված են 33 ապրանքների արտահանման C_{it} ֆունկցիաների շարժերը 2001-2010թթ.-ին: C_{it} ֆունկցիաների շարժերը և T_i-ի ընդունած արժեքները վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների արտահանումը 33-ում ենթարկվել է ուղղահայաց դիվերսիֆիկացիայի, սակայն այն ուղղված է եղել հիմնականում չվերամշակված ռեսուրսների, ինչպիսիք են չվերամշակված հանքահումքային, գյուղատնտեսական արտադրանք, և ռեսուրսների վրա հիմնված տեխնոլոգիայով ապրանքների ուղղությամբ, ինչպիսիք են ոչ թանկարժեք մետաղները, ոչ մետաղական հանքային արտադրատեսակները, կաշվե արտադրանքը: Դիտարկվող ժամանակահատվածի միջամասում սկսել են ակտիվորեն արտահանման փորձ կուտակել ցածր տեխնոլոգիական ապրանքախմբերից քիմիական նյութերը, իսկ բարձր տեխնոլոգիականից՝ դեղագործական արտադրանքը, որոնք սակայն արտահանման կուտակային ծավալում ունեն զգալի փոքր տեսակարար կշիռ՝ համապատասխանաբար՝ 0.4% և 0.3%:

«Ավանդական» ապրանքախմբերի C_{it} ֆունկցիաների շարժերը վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում ապրանքների արտահանումը 33-ում ենթարկվել է նաև հորիզոնական դիվերսիֆիկացիայի: T_i-ի համեմատաբար բարձր արժեք ունեցող ապրանքախմբերից խմիչքների, վերամշակված սննդամթերքի և ծխախոտի արտահանման ծավալների աճի տեմպերը դիտարկվող ժամանակահատվածի ավելի ուշ շրջանում սկսել են գերազանցել ավելի վաղ շրջանում արտահանման փորձ կուտակած բնական, արհեստական քարեր և թանկարժեք մետաղներ ապրանքախմբի աճի տեմպերին, ինչի արդյունքում՝ ժամանակահատվածի վերջում նշված ապրանքախմբերի արտահանման մեջ ունեցած մաս-

⁸ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով նույն աղբյուրից:

նաբաժինների միջև եղած մեծ տարբերությունը կրճատվել է, ինչը վկայում է ռեսուրսների վրա հիմնված տեխնոլոգիայով ապրանքների միջև հորիզոնական դիվերսիֆիկացիայի մասին: Սակայն ավելի բարդ տեխնոլոգիայով ապրանքախմբերը, որոնք ունեն T_i -ի համեմատաբար բարձր արժեքներ, ունեցել են աճի շատ ցածր, կամ բացասական տեմպեր, ինչի արդյունքում այդ ապրանքախմբերի մասնաբաժինը դիտարկվող ժամանակահատվածի վերջում էապես կրճատվել է:

ՀՀ արտահանման ծավալների աճի վրա ուղղահայաց և հորիզոնական դիվերսիֆիկացիայի ազդեցությունը գնահատելու համար իրականացնենք վիճակագրական թեսթ՝ օգտվելով ՄԱԿ-ի Ասիայի և Օվկիանիայի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի (UNESCAP) առաջարկած մոդելից: Վերջինիս համաձայն՝ արտահանման աճի վրա դիվերսիֆիկացիայի ազդեցությունը կարելի է գնահատել հետևյալ ռեգրեսիոն հավասարման միջոցով.

$$GREXP = \beta_0 + \beta_1 * GRNTC + \beta_2 * GRTC:$$

GREXP-ն արտահանման աճի տեմպն է, GRNTC-ն՝ «ոչ ավանդական» ապրանքախմբերի ազդեցացված աճի տեմպը, ինչը չափում է ուղղահայաց դիվերսիֆիկացիայի մակարդակը, իսկ GRTC-ն՝ «ավանդական» ապրանքախմբերի ազդեցացված աճի տեմպը, ինչը չափում է հորիզոնական դիվերսիֆիկացիայի մակարդակը:⁹

Այս հավասարումը, 2001-2010թթ. ընկած ժամանակահատվածում գնահատված ՀՀ համար, ունի հետևյալ տեսքը.

$$GREXP = 0.260 * GRNTC + 0.756 * GRTC,$$

իսկ բետտա գործակիցներով՝ հետևյալ տեսքը.

$$GREXP = 0.397 * GRNTC + 0.754 * GRTC:$$

Ռեգրեսիայի R^2 ընդունում է բավական բարձր՝ 0.982 արժեք, ինչը նշանակում է, որ անկախ փոփոխականները բացատրում են GREXP-ի վարիացիայի 98%-ը, իսկ ANOVA թեսթի F-ը ընդունում է 186.8 արժեք և 9 ազատության աստիճանով 95% վստահելիության միջակայքում $p=0.000$ սխալվելու հավանականությամբ հաստատում է ռեգրեսիայի որակը: Ավտոկորրելացիայի առկայությունը ստուգող Ղարբին-Ուաթսոն թեսթը ընդունում է 2-ից էապես չտարբերվող 1.546 արժեք, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ ավտոկորրելացիոն պրոցեսները էապես չեն ազդում ռեգրեսիայի որակի վրա: Մուլտիկոլինարության մակարդակը ստուգող վարիացիայի ինֆլացիայի գործոնը՝ VIF, ընդունում է 1-ից էապես չտարբերվող 1.223 արժեք, իսկ ռեգրեսիայի սխալի նորմալ բաշխման, հոմոսկեդիկության և գծային կապի ստուգումը իրականացվել է գրաֆիկական վերլուծության միջոցով: Ընդհանուր առմամբ՝ կարելի է պնդել, որ դիտարկվող ժամանակահատվածում արտահանման ծավալների աճի վրա հորիզոնական դիվերսիֆիկացիան ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան ուղղահայաց դիվերսիֆիկացիան. «ավանդական» ապրանքները մոտ երկու անգամ ավելի մեծ նպաստ են բերել արտահանման ծավալների աճին, քան «ոչ ավանդական» ապրանքները:¹⁰

⁹ UN ESCAP: "Export Diversification and Economic Growth: The Experience of Selected Least Developed Countries", 1997, Development Papers Nr. 27, էջեր՝ 53-54:

¹⁰ Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից՝ օգտվելով United Nations: "COM-TRADE Database", էլ. հասցե: <http://www.intracen.org/country/armenia/>:

Ամփոփելով՝ կարելի պնդել, որ 2001-2010թթ.-ին ապրանքների արտահանումը ՀՀ-ում ենթարկվել է ինչպես ուղղահայաց, այնպես էլ հորիզոնական դիվերսիֆիկացիայի, սակայն այն տեղի է ունեցել հիմնականում հանքահումքային ռեսուրսների և ռեսուրսների վրա հիմնված տեխնոլոգիայով ապրանքախմբերի աճի բարձր տեմպերի հաշվին: Ապրանքների արտահանման ծավալների աճի վրա հորիզոնական դիվերսիֆիկացիան մոտ երկու անգամ ավելի մեծ ազդեցություն է ունեցել, քան ուղղահայաց դիվերսիֆիկացիան:

ДИВЕРСИФИКАЦИЯ ЭКСПОРТА ТОВАРОВ В РА

С. А. ТАДЕВОСЯН

Начиная со второй половины 20-го века международная специализация стала одним из основных факторов роста экспорта мировой экономики. Но объемы роста экспорта, которые не комбинируются с диверсификацией экспорта, могут иметь краткосрочный характер. В статье рассматриваются проблемы экспорта продуктов, а также влияние вертикальной и горизонтальной диверсификации на рост экспорта продуктов РА 2001г. по 2010 г.

COMMODITY EXPORT DIVERSIFICATION IN THE RA

S. A. TADEVOSYAN

International specialization has been one of key drivers of the world economic development since second half of the 20th century. But export growth without export diversification might have short-term character. In this paper are discussed problems of the commodity export structure and the influence of the vertical and horizontal diversification on the commodity export growth in the RA between 2001-2010.

ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ
ԳՊՀ լաբորանտ

Շուկայական տնտեսության պայմաններում, որպեսզի տնտեսվարող սուբյեկտները կարողանան դիմակայել սուր մրցակցությանը և պահպանեն իրենց դիրքը շուկայում, անհրաժեշտ է ապահովել կայուն ֆինանսական դրություն: Սակայն շուկայական տատանումների ազդեցության հետևանքով հնարավոր է, որ կազմակերպությունները գտնվեն ֆինանսական անկայուն վիճակում, քանի որ նրանք չեն կարողանում ժամանակին ապահովել հարկային, մաքսային և